ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԼՈՌԻ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

✉ գ. Լոռի Բերդ, Աշոտ երկաթի 7

✆ 0256-2-14-75
էլ. փոստ:
loriberdhamaynq2017@mail.ru

20.02.2026թ.

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ 4

## Լոռի Բերդ համայնքում 2026 թվականի մասնակցային բյուջետավորման գործընթացի քվեարկության արդյունքների մասին

**Լոռի Բերդ համայնք, գ. Լոռի Բերդ**

Ս. թ. փետրվարի 20-ին, ժամը՝ 12:00-ին Լոռի Բերդի համայնքապետարանի նիստերի դահլիճում տեղի ունեցավ 2026 թվականի մասնակցային բյուջետավորման կառավարման հանձնաժողովի հերթական նիստը: Նիստը վարում էր հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը, նիստին ներկա էին հանձնաժողովի անդամներ՝ Մարգարիտա Հովսեփյանը, Մարինե Սահինյանը, Լիլիթ Առաքելյանը, Արմինե Ասուլյանը և Անահիտ Շահինյանը:

Հանձնաժողովի նախագահ՝ Էդուարդ Մելիքսեթյանը հայտնեց, որ ըստ պլան-ժամանակացույցի ավարտվել է մասնակցային բյուջետավորման գործընթացի առաջարկների քվեարկության փուլը: Նշեց, որ քվեարկության էր դրված 10 (տասը) նախագծեր, սակայն քվեարկության համար սահմանված նվազագույն շեմը հաղթահարել են 8 (ութ) նախագծեր: Բոլոր նախագծերն էլ բնակիչների կողմից ներկայացված են եղել բնակավայրերում **բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգման, կանաչապատման և մարզասարքերով խաղահրապարակի համալրման** վերաբերյալ: Էդուարդ Մելիքսեթյանը՝ ըստ առաջարկված ծրագրերի, ներկայացրեց քվեարկության արդյունքում հավաքած ձայների քանակները.

1. **Բովաձոր բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով** – 65 ձայն,
2" **Ուռուտ բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով** – 62 ձայն,
3" **Լոռի Բերդ բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով** – 62 ձայն,
4" **Լեջան բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով** – 76 ձայն,

5" Կողես բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով – 62 ձայն,
6" Ագարակ բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով – 68 ձայն,
7" Յաղդան բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով – 62 ձայն,
8. Սվերդլով բնակավայրի համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով – 70 ձայն,
9" Լոռի Բերդ բնակավայրի գերեզմանատան ցանկապատերի վերանորոգման և բարեկարգման ծրագիր – 6 ձայն:
10" Ուռուտ բնակավայրի գերեզմանատան ցանկապատերի վերանորոգման և բարեկարգման ծրագիր – 15 ձայն:

Հանձնաժողովի անդամները, մանրամասն քննարկելուց հետո, եկան այն եզրակացության, որ նպատակահարմար է բոլոր ծրագրերը միավորել և իրականացնել <<Լոռի Բերդ համայնքի Ագարակ, Բովաձոր, Լեջան, Լոռի Բերդ, Կողես, Յաղդան, Սվերդլով, Ուռուտ բնակավայրերում **համայնքային կենտրոնի բարեկարգում, կանաչապատում և խաղահրապարակի համալրում մարզասարքերով**>> մեկ ծրագրի շրջանակում:

Հանձնաժողովի նախագահ՝ _____ Է. Մելիքսեթյան

Հանձնաժողովի անդամներ՝ _____ Մ. Հովսեփյան

_____ Լ. Առաքելյան

_____ Ա. Ասուլյան

_____ Ա. Շահինյան

Հանձնաժողովի քարտուղար՝ _____ Մ. Սահինյան